

Անահիտ ՀԱՅՐԻՅԱՆ

*Ստեփանակերտի Մեսրոպ Մաշտոց Համալսարան,
հայոց լեզվի և գրականության ամբիոն, ավագ դասախոս*

ԱՐՑԱԽԸ՝ ՆԵՐՇՆՉԱՆՔԻ ԱՂԲՅՈՒՐ

Սույն հոդվածում ներկայացվում է հռչակավոր մանկագիր, դրամատուրգ, թարգմանիչ, երգիծաբան, հասարակական գործիչ Սուրեն Մուրադյանի կոնկրետ փաստերով և օրինակներով ընդգծված սերտ կապը Հայոց Արցախ աշխարհի հետ, նրա ոգեշունչ արձագանքները՝ առնչված Արցախյան ազգային – ազատագրական գոյամարտին: Նշվում է նրա համոզմունքն ու հավատը հայ ժողովրդի միասնական պայքարի հանդեպ, որի առիթով էլ բացականչում է. «Ես հպարտ եմ, որ հայ եմ»:

Բանալի բառեր. Սուրեն Մուրադյան, մանկական պոեզիա, Հայաստան, Արցախ, ազգային ազատագրական պայքար, ազատամարտիկ, մայր, ազատություն:

А. Айриян

АРЦАХ – ИСТОЧНИК ВДОХНОВЕНИЯ

В статье представлены основанные на конкретных фактах и примерах сведения о связи известного детского писателя, драматурга, переводчика, сатирика, общественного деятеля Сурена Мурадяна с Арцахом, его воодушевленный отклик на события Арцахского национально-освободительного движения. Особо отмечается его убежденность в победе народа и его единстве. Поэт восклицает: «Я горжусь тем, что я армянин!»

Ключевые слова: Сурен Мурадян, детская поэзия, Армения, Арцах, национально-освободительская борьба, воин-освободитель, мать, свобода.

A. Hayriyan

ARTSAKH IS THE SOURCE OF INSPIRATION

The article presents the information about the close links of the famous children's writer, playwright, translator, satirist, public figure Suren Muradyan with Artsakh, his inspired response to the events of the Artsakh national liberation movement based on concrete facts and examples. His conviction in the victory of the people and its unity is especially noted. The poet exclaims: "I am proud to be Armenian!"

Key words: Suren Muradyan, children's poetry, Armenia, Artsakh, national liberation struggle, warrior-liberator, mother, freedom.

«Ես հպարտ եմ, որ հայ եմ»

Ս. Մուրադյան

Հայ մանկագրությունը, որ սկիզբ է առել 12-րդ դարի հանճարեղ բանաստեղծ, հայ մշակույթի հետնարեկացիական շրջանի հզոր գործիչ Ներսես Շնորհալուց, զարգացման փառավոր ուղի է անցել, հասել հայ նոր գրականության հիմնադիր Խ.Աբովյանին, ապա Ղ.Աղայանին, Հովհ. Թումանյանին, Աթաբեկ Խնկոյանին՝ դառնալով դասական մանկագրության դպրոց՝ հետագա ժամանակների համար։ Խորհրդային շրջանում մանկագրությունը, առանձնապես պոեզիան մի նոր աստիճանի հասցրին Հ.Հայրապետյանը, Ա.Դարբինին, մասամբ Սարմենը և ուրիշներ։ Փոքրերի համար ստեղծվող մեծ գրականության զարգացմանը եռանդուն մասնակցեցին Յու. Սահակյանը, Եր.Պետրոսյանը, Ս.Մուրադյանը, Արցախում Գ.Գաբրիելյանը և այլ։ Վերոնշյալ բանաստեղծների շարքում ավելի նշմարելի է անվանի բանաստեղծ, մանկագիր, դրամատուրգ, երգիծաբան Սուրեն Մուրադյանի գրական վաստակը։ 2015թ. գրական հայ հասարակայնությունը լայնորեն նշեց նրա ծննդյան 85-ամյակը։ Ամենուրեք մամուլը հպարտությամբ նշեց, որ տաղանդավոր գրողը ստեղծագործական 50 տարիների ընթացքում հրատարակել է 150 գիրք : 2017 թ. անվանի գրողը մտահղացավ լույս ընծայել մի ժողովածու՝ «Ձմեռնամուտի գանձեր» խորագրով։ Հիրավի, այդ գիրքը բարձրարժեք գանձերի հավաքածու է, որին ծանոթանալուց հետո կրկին ու կրկին հպարտանում ես հայ ժողովրդի տաղանդավոր զավակների աստվածային անսպառ եռանդի, արարող մտքի կարողությամբ ու վերհիշում ռուս ականավոր բանաստեղծ-գիտնական, հայ ժողովրդի մեծ բարեկամ Վալերի Բրյուսովի գնահատականը. *«Ճիշտ են ասել, որ հայ ժողովուրդը բանաստեղծ ժողովուրդ է»*։ Ընթերցում ես ժողովածուն և հիացմունքի զգացում է պարուրում սիրտդ։ Որքա՛ն կարևոր հոդվածներ է ստեղծել հայ դասական գրողների, նկարիչների, կոմպոզիտորների, արվեստի հանրահայտ գործիչների մասին, մասնակցել մշակութային բոլոր միջոցառումներին՝ հնչեցնելով իր խոսքը կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ։

Լայն հորիզոններ են ընդգրկում նրա շփումները տարբեր ժողովուրդների անվանի արվեստագետների հետ։ Այդ են վկայում նրա ազգօգուտ նամակները՝ ուղղված Մերգեյ Միխալկովին, Սամուել Մարշակին, Նիկոլայ Տիխոնովին, Իրինա Տոկմակովային և այլոց։ Այդ նամակներում շոշափված են հայ և ռուս ժողովուրդներին հուզող հիմնախնդիրներ, երկու բարեկամ ժողովուրդների գրական կապերին նոր թափ ու նոր իմաստ հաղորդելու ուղիներ։

Ուշագրավ երևույթ է Ս.Մուրադյանի նամակը՝ նորին սրբություն Հռոմի սրբազան քահանայապետ Ֆրանցիսկոս Պապին։ Նամակը բերում ենք ամբողջությամբ.

«Ձեր այցը առաջին քրիստոնեական երկիր՝ Հայաստան մեծ երախտագիտությամբ ու ջերմագին զգացմունքով լցրեց Հայաստանի և աշխարհասփյուռ հայության սրտերը:

Վեհաշուք Արարատի հայաքթի ներքո հնչեցրած Ձեր «Արդարություն և խաղաղություն» ավետող աղոթքը վեհորեն սավառնում է հայոց պայծառ ու կապույտ երկնքում:

Ես՝ որպես հայ բանաստեղծ, ոգեշնչվեցի Ձեր արգասաբեր ուխտագնացությամբ և գրեցի «Բարի՛ գալուստ, Մեծ ուխտավոր» բանաստեղծությունը, որ Ձեր լուսանկարի հետ տպագրվեց Հայաստանի գրողների միության լրագիր «>Գրական թերթում»: Բանաստեղծությունը թարգմանչուհի Լուսինե Ստեփանյանի իտալերեն թարգմանությամբ ուղարկում եմ Ձեզ՝ Վատիկան:

Ձեր լուսավոր կերպարը, մարդասիրական առաքելությունը հավերժ կոգեշնչի իմ երախտապարտ ժողովրդին:

Ձեր մեկնելուց հետո ես այցելել եմ Մեծ եղեռնին զոհ գնացած մեկուկես միլիոն հայերի հուշահամալիր և Ծիծեռնակաբերդի Հիշատակի ծառուղում ջրել եմ Ձեր անունը խորհրդանշող եղնին:

Ձեզ երկար տարիների կյանք, արևշատություն եմ մաղթում անձամբ իմ և իմ ժողովրդի անունից:

Խորին երախտիքով,

Բանաստեղծ, Հայաստանի գրողների միության անդամ՝ Մուրեն Մուրադյան՝

Դժվար չէ նկատել հայերենից բացի 17 լեզուներով տպագրված, հարյուր երեսուն գրքերի հեղինակ, գրական և կառավարական տասնյակ մրցանակների ու ոսկեգոծ մեդալների արժանացած անվանի գրողի հետաքրքրությունների շրջանակն ու հայանպաստ գործունեության լուսավոր շրջանակները:

Ս.Մուրադյանի համար հայ ժողովրդի անունը հորիզոններ է ընդգրկում: Նրա ստեղծագործական հարուստ ժառանգության էջերում բարձր է հնչում Մայր Հայաստանի, Արցախի, Սփյուռքի անխախտ միասնության կոչը: Եվ երիցս հաճելի է, երբ սույն ժողովածուում հանդիպում ենք այն արևաշող էջերին, որոնք նվիրված են Արցախյան ազգային-ազատագրական գոյամարտին, ժողովրդի սխրանքին, արդարամտությանն ու հավերժվելու վճռականությանը:

Կարդում ենք «Ես հպարտ եմ, որ հայ եմ» սրտաբուխ խոսքը իր հայ լինելու մասին և անհուն ատելությամբ լցվում հարևան ազգերի թուրք հրոսակների հանդեպ: Ականավոր գրողը դատափետում է Ադրբեջանի վայրագ հրոսակներին, որոնք 2016թ -ի ապրիլի 1-2 -ին սև ամպեր կուտակեցին Արցախի սահմանի ամբողջ երկարությամբ՝ օգտագործելով զենքի բոլոր տեսակները: Նա միաժամանակ հաստատում է, որ Արցախին

¹ Մուրադյան Ս., «Ձմեռնամուտի գանձեր», «ՎՄՎ-Պրինտ», 2017 - էջ 163:

սպառնացող վտանգն անմիջապես համախմբեց ողջ հայությանը, փութով կազմվեցին կամավորական խմբեր, փորձառու ազատամարտիկներից կազմված ջոկատներ, որոնք մեկնեցին Արցախ՝ համալրելու երիտասարդ սահմանապահ զինվորների շարքերը, պաշտպանելու իրենց հայրենիքը: «Հուզիչ էր այն փաստը, - ընդգծում է հեղինակը, - երբ կամավոր գրվեց նաև հաշմանդամ, փայտին հենված ազատամարտիկ Արայիկ Հակոբյանը, հավաքվեցին մայրերը, կանայք՝ քաջալերելու իրենց զավակներին: Այս համախմբվածությունը, հայրենաշունչ նվիրվածությունը հպարտության, պաշտամունքի զգացումով այրեց իմ հոգին, ու ինքս ինձ շնջացի. «Ես հպարտ եմ, որ հայ եմ»:¹

Գնահատելով ազատասիրական, հայրենասիրական այդ համախմբվածությունը՝ Ս. Մուրադյանը հիշում է 1918թ. մայիսի 28-ին տեղի ունեցած Սարդարապատի ճակատամարտը, որտեղ հիմնովին ջախջախվեց թուրքական բանակը և ծածանվեց հաղթանակի դրոշմը: Գրողը պատգամում է. «Թուրքն ու աղբբեջանցին նույն մարդատյացն են, վայրագը, ջարդարարը, երկուսն էլ նույն մետաղի երկու երեսն են»:²

2016թ. -ի ապրիլյան օրերին նա գրել է «Նզովք թշնամուն» բանաստեղծությունը, որը տպագրվել է «Գրական թերթի» ապրիլյան առաջին համարում: Ստեծագործությունը բերում ենք ամբողջությամբ՝ հուսալով, որ ընթերցողին այն կհետաքրքրի.

*Ո՛չ սիրտ ունի, ո՛չ հայրենիք ունի թուրքը,
Միշտ ուրիշի հողին է իր աչքը, ուշքը,
Ոտից գլուխ հանցագործ է, թունոտ օձ է,
Կացինն ուսին՝ արյունարբու մսագործ է:
Ուր ոտք դնի խոպան, տատասկ, քարքարոտ է,
Աղետավոր, վարակածին ու բորոտ է:
Թուրքն ի ծնն նավթահոտ է, տհաճ, սև է,
Դժոխքներում թույնով սնված անսանձ դև է:
Մորավիհան է ծաղրել թուրքի վարքն անառակ,
Թուրքի, որը կույսին պղծել է խայտառակ:
Ամեն մի թուրք վայրի, ազահ մի գայլուկ է,
Եթե շատ են՝ գայլերի մի մեծ բոլուկ է:
Թուրքին գետեն բյուր ազգերը, երկրագունդը,
Նզովում են նրա ճամփան ու ծնունդը:
Հրդեհները, մարդու վիշտն է պաշտում թուրքը,
Հրեշավոր Ներոնն է լոկ նրա կուռքը...³*

¹ Նույն տեղում, էջ 102:

² Նույն տեղում, էջ 103:

³ Մուրադյան Ս., Չմեռնամուտի գանձեր, Եր., 2017:

Ս.Մուրադյանի ստեղծագործությունը վաղուց դարձել է նաև Արցախի դպրոցականների սեփականությունը: Այդ է վկայում Մարտունու շրջանի Կադարծի գյուղի միջնակարգ դպրոցի «Պարույր Սևակ» ակումբի անդամների «Մանուկների սիրելի բանաստեղծը» խորագրով նամակը՝ տպագրված «Լոռի» թերթի 1990 թ. դեկտեմբերի 27 -ի համարում: Այն սովորական նամակ չէ, այլ մարտնչող Արցախի նոր սերնդի հպարտությունն ու կարոտը Մայր Հայաստանի ու նրա տաղանդավոր զավակների ստեղծած գրական արժեքների հանդեպ: Նամակի առիթը մանկագիր Ս. Մուրադյանի ծննդյան 60-ամյա հոբելյանն է, որը արժանավայել նշվել է Արցախի Կադարծի գյուղի միջնակարգում, որի տնօրենն այն ժամանակ ազատամարտիկ Արմեն Սարգսյանն էր, այսօր հայտնի քաղաքական գործիչ և ԱՀ Ազգային ժողովի պատգամավոր:

Արցախի դպրոցականները նամակում հպարտությամբ են խոսում Ս.Մուրադյանի երգերի մասին, որոնց մեծ մասը գիտեն անգիր: «Հանդիսությամբ, - գրում են արցախցի բալիկները, - շատերն էին մասնակցում՝ աշակերտներ, ուսուցիչներ, կոլտնտեսականներ: Դպրոցի բակը մարդկանցով լիքն էր: Վերջում երգեցինք բանաստեղծի խոսքերով երգահան Գ.Զթյանի «Ժառանգներն ենք Արցախի» երգը: Ասենք նաև, որ մենք արդեն հեռակա կարգով ծանոթ ենք սիրելի բանաստեղծի հետ: Այս տարվա գարնանը նա սիրով ու պատրաստակամորեն ընդառաջել է մեր խնդրանքին և գրախոսել մեր դպրոցում հրատարակված «Գարուն- 90» մրցույթի մի քանի մասնակիցների ոտանավորները և իր մի քանի ժողովածուներից ընծայագրված օրինակներ ուղարկել նրանց: «Արևիկ» հրատարակչության վերջերս լույս ընծայած «Մուրեն Մուրադյան – 60» կենսամատենագիտությունը նա ընծայականով մեզ է ուղարկել, խոստացել է հյուրընկալվել մեր գյուղում, եթե նորից այցելի Արցախ: Չմոռանանք ավելացնել, որ բանաստեղծի հոբելյանի նախօրյակին նրան շնորհակալական հեռագրեր ենք ուղարկել մեր դպրոցի աշակերտների և ուսուցչական կոլեկտիվի անունից»:¹

Ազատ և անկախ ապրող Արցախի նոր ճանապարհը ձգվում է և՛ հավերժալույս, և՛ մաքառման նոր խաչմերուկներով: Ազերի-թուրք թշնամին նենգ է, չի հաշտվում իր խայտառակ պարտության հետ, գիտե, որ Արցախն ազերի քոչվոր ցեղերի հետ կապ չունի, բայց անդադար հոխորտում են, որ իրենք են ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի, նրա մայրաքաղաք Երևանի տերերը: Այդ հոխորտանքի հետևանքն է 2016 թ. ապրիլյան պատերազմը, որի ընթացքում նահատակվեցին առյուծասիրտ Աբաջյաններ: «»

Ս.Մուրադյանի որդիական սիրո լավագույն արտահայտություններից է «Արցախում զոհված ազատամարտիկների մայրերին»

¹ Նույն տեղում, էջ 172-173:

բանաստեղծությունը: Որպես բնաբան Ս.Մուրադյանը բերել է Հ.Թումանյանի հետևյալ իմաստուն տողերը.

Բարի իրիկուն, վշտալի մայրեր,

Ինչ ցեղ էլ լինեք...

Ինչ տեղ էլ լինեք...

Իմ մայրերն եք դուք...¹

Մեծ լռեցու մարդասիրական այս գաղափարը շատ է հեռու ադրբեջանական հրոսակների հայատյացության քարոզից: Մերօրյա հայ բանաստեղծ Ս. Մուրադյանը, շարունակելով Մեծն Թումանյանի մարդասիրական խոսքը, ժխտում է պատերազմը՝ միաժամանակ ընդգծելով այն համոզմունքը, որ հայրենիքը պետք է պաշտպանել անգամ կյանքի գնով: Եվ առաջին հերթին նա դիմում է հայ մայրերին, որոնք «օրորոցում կտրիճների մանկությունն են օրորել», երազել են «հարսներ բերել ու թոռներ ունենալ».

Ավա դ, նրանց գութանի տեղ

Բաժին ընկավ մահ ու տանկ:

Նրանք թուրքի նենգ գնդակից

Դարձան հավերժ նահատակ...²

Բանաստեղծը որդեկորույս հայոց մայրերին համբերություն է մաղթում՝ հաստատելով Արցախ աշխարհի արդարացի գոյամարտը Ադրբեջանի հայահալած լծի դեմ, կոչ անում աշխարհասփյուռ հայությանը միաբանավել ընդհանուր թշնամու դեմ՝ հանուն հայության ապագայի:

Գրականություն

1. Մուրադյան Ս., «Ձմեռնամուտի գանձեր», Եր., 2017:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, ք.գ.դ., Ս.Ա. Խանյանը:

¹ Մուրադյան Ս., «Ձմեռնամուտի գանձեր», «ՎՄՎ-Պրինտ», 2017 - էջ 231:

² Նույն տեղում, էջ 231: